

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով «Մաքսային միության մասին» Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ 1995 թվականի հունվարի 6-ին կնքված համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնք հիմնելու մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի վրա,

կապիտալի ազատ տեղաշարժը ապահովելու, ֆինանսական հատվածում փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակներով

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացությունների սահմանումը

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«ֆինանսական ծառայություններ»՝ ֆինանսական բնույթի ծառայություններ, որոնք ներառում են.

բանկային ծառայությունները,

արժույթային շուկայի ծառայությունները,

արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների ծառայությունները,

ապահովագրական ծառայությունները,

«արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ»՝ իրավաբանական անձինք, որոնք իրավունք ունեն մասնագիտական գործունեություն իրականացնել արժեթղթերի շուկայում, այն Կողմի օրենսդրության համապատասխան, որի տարածքում դրանք գրանցված են,

«վարկային կազմակերպություն»՝ իրավաբանական անձ, որը լիազոր մարմնի կողմից տրամադրված հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իր գործունեության հիմնական նպատակ հանդիսացող՝ շահույթ ստանալու նպատակով իրավունք ունի իրականացնել բանկային գործառնություններ,

«ապահովագրական կազմակերպություն»՝ իրավաբանական անձ, որը իրավունք ունի իրականացնել ապահովագրական (վերաապահովագրական) գործունեություն, այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում այն գրանցված է,

«ֆինանսական շուկայի մասնակիցներ»՝ իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են ֆինանսական ծառայությունների մատուցման գործունեություն:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի կատարմանն ուղղված միջոցները

Սույն Համաձայնագրի կատարման նպատակներով՝ Կողմերը բանկային ոլորտում, արժութային շուկայում, արժեթղթերի շուկայում եւ ապահովագրության ոլորտում իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ:

Բանկային ոլորտում իրականացվում են հետեւյալ միջոցառումները.

Կողմերի ներդրողների կողմից վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասերի ստեղծման (բաժնետոմսերի թողարկման) եւ ձեռքբերման հարցերի շուրջ՝ Կողմերի օրենսդրության ներդաշնակեցում,

ֆինանսական շուկայում միջազգային չափանիշներին համապատասխան ռիսկերի կարգավորման համար մոտեցումների ներդաշնակեցում,

Կողմերի լիազոր մարմինների միջեւ բանկային ոլորտի զարգացման եւ կարգավորման հարցերի շուրջ տեղեկությունների փոխանակման կազմակերպում:

Արժութային շուկայում իրականացվում են հետեւյալ միջոցառումները.

արժույթային շուկայի զարգացման եւ կարգավորման հարցերի շուրջ՝ Կողմերի լիազոր մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման կազմակերպում,

Կողմերի ազգային արժույթներով փոխարկման գործարքներ իրականացնելու համար արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծում՝ նպատակ ունենալով ընդլայնել դրանց օգտագործումը արտաքին առեստրային վճարումներում եւ հաշվարկներում,

Կողմերի ազգային արժույթների փոխարժեքների սահմանման համար սկզբունքների եւ կանոնների ներդաշնակեցում:

Արժեթղթերի շուկայում իրականացվում են հետեւյալ միջոցառումները.

արժեթղթերի եւ այլ ֆինանսական գործիքների շուկայի կարգավորման հարցերի շուրջ՝ Կողմերի լիազոր մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման կազմակերպում,

արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեության կարգավորման ոլորտում Կողմերի օրենսդրության ներդաշնակեցում,

Կողմերի արժեթղթեր թողարկողների կողմից էմիսիոն ընթացակարգի (թողարկման կարգի) նկատմամբ պահանջների ներդաշնակեցում,

ազգային շուկաներում օտարերկրյա թողարկողների արժեթղթերի տեղաբաշխման եւ շրջանառության նկատմամբ՝ Կողմերի օրենսդրությունների պահանջների ներդաշնակեցում:

Ապահովագրության ոլորտում իրականացվում են հետեւյալ միջոցառումները.

ապահովագրական շուկայի կարգավորման հարցերի շուրջ Կողմերի լիազոր մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման կազմակերպում,

Կողմերի ապահովագրական օրենսդրության, ինչպես նաեւ ապահովագրական վերահսկողության պահանջների եւ մոտեցումների ներդաշնակեցում եւ ապահովագրական գործունեության կարգավորում՝ հաշվի առնելով միջազգային կանոնների եւ չափանիշների դրույթները:

համագործակցություն պարտադիր ապահովագրության, վերաապահովագրության, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնելու ասպարեզում կանոնակարգող նորմերի մոտարկման ոլորտում,

ապահովագրական ծառայությունների սպառողների շահերի եւ իրավունքների պաշտպանության համար միասնական պահանջների համաձայնեցում,

ապահովագրական (վերաապահովագրական) կազմակերպությունների վճարունակությունը եւ ֆինանսական կայունությունը որոշելու համար միասնական սկզբունքների եւ մոտեցումների համաձայնեցում,

Հոդված 3

Ֆինանսական շուկայի մասնակիցների գործունեության թափանցիկության ապահովում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային չափանիշների պահանջների կատարում

Ֆինանսական շուկայի թափանցիկության ապահովման համար՝ Կողմերի համատեղ գործողությունները ուղղված են.

իրապարակվող տեղեկությունների ծավալի, որակի եւ պարբերականության նկատմամբ պահանջների ներդաշնակեցմանը,

Թողարկողների կողմից տեղեկատվության բացահայտման, գաղտնիքի տիրապետող անձանց կողմից տեղեկությունների անօրինական օգտագործմանը հակազդելուն եւ արժեթղթերի շուկայում մեքենայություններ կատարելու ոլորտում Կողմերի օրենսդրության ներդաշնակեցմանը,

վարկանիշային գործակալությունների կողմից՝ թափանցիկության, համակարգային ռիսկերը կանխելու համար ենթահաշվետու լինելու եւ պատասխանատվություն ստանձնելու սկզբունքներին համապատասխան գործունեություն իրականացնելու նկատմամբ պահանջների ներդաշնակեցմանը,

Կողմերի ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից ֆինանսական հաշվետվությունների միջազգային չափանիշներին անցումը եզրափակելը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման փուլերը

Սույն Համաձայնագիրը կատարվում է երկու փուլով.

Առաջին փուլը նախատեսում է Կողմերի լիազոր մարմինների միջև մշտական հիմունքներով տեղեկությունների փոխանակման կազմակերպումը այն ոլորտներում, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ եւ 3-րդ հոդվածներում:

Երկրորդ փուլը նախատեսում է Կողմերի օրենսդրության ներդաշնակեցում այն ոլորտներում, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ եւ 3-րդ հոդվածներում, հաշվի առնելով միջազգային կանոնների եւ չափանիշների դրույթները, ներառյալ ֆինանսական շուկայի մասնակիցների նկատմամբ լիցենզիոն պահանջների, ֆինանսական շուկայի մասնակիցների նկատմամբ վերահսկողության պահանջների եւ վերահսկողության իրականացման կարգի ներդաշնակեցումը, ինչպես նաեւ Միասնական տնտեսական ամբողջ տարածքում Կողմերի թողարկողների կողմից արժեթղթերի տեղաբաշխման եւ շրջանառության հնարավորությունը ապահովելը՝ պայմանով, որ արժեթղթերի էմիսիան (թողարկումը) գրանցվի թողարկողի գրանցման պետության՝ կարգավորող մարմնի կողմից: Իրականացման ժամկետն է մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 5

Համագործակցության հիմնական ձեւերը

Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով՝ ֆինանսական շուկայում պայմանների ստեղծման համար կիրառվում են համագործակցության հետեւյալ հիմնական ձեւերը.

Կողմերի լիազոր մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման իրականացում,

ֆինանսական ծառայությունների շուկայում ընթացիկ խնդիրների քննարկման եւ դրանց լուծման համար առաջարկների մշակման վերաբերյալ համաձայնեցված միջոցառումների անցկացում,

Կողմերի լիազոր մարմինների կողմից, ֆինանսական ծառայությունների կարգավորման ոլորտում իրենց իրավասության ներքո գտնվող հարցերի առնչությամբ խորհրդատվական օժանդակության տրամադրում,

միջազգային պայմանագրերի կնքում սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանվող միջոցների իրականացման համար:

Հոդված 6

Վեճերի լուծումը

Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջև պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 7

Փոփոխությունների կատարումը

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են դրա անքակտելի մաս կազմող առանձին արձանագրություններով, եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելու կարգը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից, այն է՝ Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն, համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից սկսած 30 օր հետո:

Սույն Համաձայնագիրը բաց է Մաքսային միության անդամ դարձած այլ պետությունների անդամակցության համար: Սույն Համաձայնագրին միանալու վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ավանդապահին՝ պահպանելու համար:

Միացած պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝
ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է ավանդապահի մոտ, որը այն ստորագրած յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

(ստորագրություններ)